

4090

1917

258

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

Printed in Turkey



Տպագրութիւն Ռ. ՍԱԳԱՆԱՆ

1913

281.6

Ս-11

2010

281-6

U-11

11088



Printed in Turkey

4-21

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

Մ Ա Ս Ա.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

ՅՕԴ. 1. Միաբանութիւնը՝ որուն պետն է Պատրիարքը՝ կազմուած է եպիսկոպոսներէ, վարդապետներէ և սարկաւազներէ:

ՅՕԴ. 2. Միաբանութեան անդամներուն թիւը սահմանուած է հետեւեալ կերպով.

Պատրիարք		1
Եպիսկոպոսներ		5
Վարդապետներ		46
Սարկաւազներ		18
		70

Միաբանութեան վերոյիշեալ ընդհանուր և ստորաբաժանեալ թիւերի այն ատեն միայն կրնան փոփոխութեան ենթարկուիլ՝ երբ Միաբանութեան Ընդհանուր Ժողովը Վանքի Կրօնական Վարչութեան անթերի կատարումին համար անհրաժեշտ պէտքը տեսնէ փոփոխութեան և պատճառաբանեալ տեղեկագրով յայտագրէ Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովին, և այս վերջինն ալ փոփոխութեան առաջարկը իւրացնելով զայն ենթարկէ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովի քննութեան ու վաւերացումին: Փոփոխութիւնը կ'իրագործուի Երեսփ. Ընդհ. Ժողովին առաջարկին ընդունուելէն և ըստ այնմ այն յօդուածը բարեփոխուելէն հտքը միայն:

ՅՕԴ. 3. Պատրիարքին կամ Տեղապահին ընտրութեանց եղանակը սահմանուած է Թուրքիոյ Հայոց Ազգ. Սահմանադրութեան 21, 22, 23 յօդուածներով:

ՅՕԴ. 4. Միաբանութեան անդամներուն ընտրելիութեան պայմաններն են,

2304-40

Ա. 22 տարիքը լրացուցած ,

Բ. Ֆիզիքական առողջութիւնը բժշկական վկայականով հաստատուած ,

Գ. Առնու ազն միջնակարգ կրթութիւն ստացած ,

Դ. Ամբասիր վարքը Ազգ. պաշտօնական մարմնէ մը վկայուած ըլլալ :

ՅՕԴ. 5. Պակտով ու է անդամի տեղ նորի մը ընտրութիւնը կը կատարուի Միաբանութեան Ընդհանուր Ժողովին կողմէ առաջարկութեամբ Ս. Պատրիարքին : Ընտրութեան տեղեկագիրը , ընտրելին կանոնական պայմանները լրացուցած ըլլալը ապացուցանող վաւերագրերով միասին , կը զբոսի Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովին՝ որ կը քննէ զայն և ընտրութիւնը կը վաւերացնէ՝ եթէ 4րդ յօդուածին մէջ յիշուած տրամադրութիւններուն համապատասխան գտնէ զայն : Ընտրուող նոր անդամը Խառն Ժողովի վաւերացումէն ետքը միայն միաբան կը նկատուի :

ՅՕԴ. 6. Միաբանութեան ամէն մէկ անդամ Վանքի Տնտեսական Վարչութեան հաւասարապէս պիտի ստանայ իր անձին համար Վանքին մէջ բնակարան , անուշիկ , զգեստ , վառելիք , լուսավառութիւն , բժշկական դարման ու խնամք և ուսումնական-կրթական զարգացման միջոցներ :

Վերոյիշեալներէն դուրս , անձնական ծախքերու համար թոշակներ պիտի վճարուին , որոնց քանակութիւնը պիտի սահմանուի առանձին հրահանգով և պիւտճէի օրինագծին համաձայն : Վանքէն դուրս թուրք աշն տեղերը ուր հինգ հոգիէ պակաս միաբանութիւն կայ , անոնց անունդին և զգեստին փոխարէն որոշ գումար մը պիտի տրամադրուի անտեսական մարմնոյն կողմէ . իսկ հինգ հոգի կամ աւելի գտնուած տեղերը տեղանք ընդհանուր պիտի ըլլայ : Վանքէն դուրս , բայց Վանքի վերաբերեալ պաշտօնի մը կոչուելու պարագային , միաբան մը պիտի ստանայ երթեւեկի ծախք և տեղւոյն ու պարագային համեմատ անտեսական մարմնոյն կողմէ որոշուելիք անունդի և զգեստի ծախքեր :

Մանօր. — Վանական տեղանքները հասարակաց են և որ և է միաբան , — ինչ անտիճանի ալ պատկանի , — առանձին ճաշ պահանջելու իրաւունք չունի , բացի հիւանդութեան պարագայէն :

ՅՕԴ. 7. Միաբանութեան անձնուր անդամ անձնական սեփականութեան իրաւունքով ինչք կամ կալուած կրնայ ունենալ : Միայն թէ , սեփականատէր միաբանը կալուածներուն վարձքը կամ եկամուտը ի կենդանութեան անձնապէս վայելելով հանդերձ՝ կալուածը վազճ կամ ցեֆի միւլի եղանակով և կամ պետութեան տիրող օրէնքի տրամադրութեանց համաձայն , պաշտօնապէս վանքի անուան փոխանցելու և փոխանցումը հաստատող օրինական վաւերագրերը Տնտեսական Վարչութեան յանձնելու պարտաւոր է :

ՅՕԴ. 8. Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքն է օրինական ժառանգորդը Միաբանութեան իւրաքանչիւր անդամին : Վախճանած միաբաններու շարժական , անշարժ ամէն մէկ գոյքն ու սեփականու-

թիւնը՝ ուր որ ալ գտնուի , ժառանգաբար վանքին միայն կը պատկանի ու անոր կը յանձնուի :

ՅՕԴ. 9. Միաբաններու եկեղեցական աստիճաններու բարձրացման և վերոյիշեալ յօդուածներով սահմանուած պայմաններու վերաբերեալ կանոններ ու մանրամասնութիւններ ներքին կանոնագրով առանձին ճշդուած են :

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՕԴ. 10 Միաբանութիւնը պարտաւոր է Երուսաղէմի Տնօրինական Ս. տեղեաց մէջ Հայաստանեաց Եկեղեցւոյ և Ազգին դարաւոր իրաւունքներն ու Սրբութիւնները անվթար և անխախտ պահել : Եկեղեցիի նուիրապետական կարգապահութիւններուն կատարեալ համակերպութիւն ցոյց տալ : Ըստ այսմ , իւրաքանչիւր միաբան անպայման պարտաւոր է ընդունիլ վանական Վարչութեան կողմէ իրեն յանձնուած պաշտօնն ու պարտականութիւնը և զայն անթերի կատարել :

ՅՕԴ. 11 Երուսաղէմի Պատրիարքը կամ Տեղապահը , իբր պետ Ս. Յակոբեանց վանքի Միաբանութեան , Վանական Վարչութեան բոլոր ճիւղերուն կը նախագահէ : Ի բացակայութեան Ս. Պատրիարքին կամ Տեղապահին Պատր. փոխանորդն է որ կը կատարէ սոյն պարտականութիւնը : Խորհրդակցութիւնները կը վարէ իւրաքանչիւր մարմնի ատենապետը , ներքին կանոնագրի տրամադրութեան համաձայն :

ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՀՐԱՄԱՐՈՒՄԸ

ՅՕԴ. 12 Միաբանութեան որ և է անդամի ղէմ ամէն մէկ միաբան կամ որ և է ազգային անհատ բողոքելու և ամբաստանութիւններ ընելու իրաւունք ունի :

Բողոքներն ու ամբաստանութիւնները կրնան հաւասարապէս ներկայացուիլ :

Ա. — Ս. Պատրիարքին

Բ. — Ազգ. Երեսի . Ընդհ. Ժողովի ներկայացուցիչին

Գ. — Ազգ. Կեդր. Վարչութեան

ՅՕԴ. 13 Եկեղեցական պաշտամունքի կամ պարտականութեան վերաբերեալ պարզ բողոքներու համար Պատրիարքը իբր պետ Միաբանութեան , իրաւունք ունի իր անձնական քննութեան և իւղճի համոզմունքին համաձայն յանդիմանութիւններ ուղղելու կամ կարգապահական պատիմներ անօրինելու :

Եթէ բողոքներուն առարկան բարոյական զայնթակելութիւն պատճառով հանգամանք ունի և կամ զեղծումի ու ըմբոստացումի կարգին վերաբերի , այս կարգի բողոքներն ու ամբաստանութիւնները ,

որու ալ ներկայացուած ըլլան. Պատրիարքին միջոցաւ Տնօրէն Խորհուրդին յղուելէ և Տնօրէն Խորհուրդի կողմէ նախնական քննութիւնը կատարուելէ վերջ անոր քննութեան ամփոփումն ու կարծիքը թովանդակող տեղեկագրով մը կը յանձնուի Միաբանական Ընդհ. Ժողովին, որու իրաւասութեան կը պատկանի դատել և վճիռ տալ:

Եթէ այս կարգի բոլոր ու ամբաստանութիւն Տնօրէն Խորհուրդին որ և է մէկ անդամն դէմ ըլլայ, Պատրիարքի միջոցաւ խնդիրը ուղղակի Միաբանական Ընդհ. Ժողովին կը յանձնուի:

ՅՕԴ. 14 Միաբանական Ընդհ. Ժողովի կողմէ արուելիք բոլոր պատժական որոշումները կը տեղեկագրուին Ազգ. Կեդր. Վարչութեան որ զանոնք վերաքննելու իրաւունք ունի:

ՅՕԴ. 15 Երուսաղէմի Պատրիարքին կամ Տեղապահին դէմ ամբաստանութիւն, Ազգ. Սահմանադրութեան 19րդ և 6րդ յօդուածներուն համաձայն Կ. Պոլսոյ Պատրիարքին դէմ եղած ամբաստանութեանց մասին սահմանուած պայմաններու եւ ձեւերու հետեւողութեամբ, Ազգ. Կեդր. Վարչութեան միջոցաւ կը ներկայացուի Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովին:

Պատրիարքին կամ Տեղապահին դէմ ամբաստանութեան իրաւունք ունին Միաբանական Ընդհ. Ժողովը Տնօրէն Խորհուրդը, Տրնտեսական մարմինը, Երեսփոխանական Ժողովի Ընդհ. ներկայացուցիչը և Ազգ. Կեդր. Վարչութիւնը:

ՅՕԴ. 16 Արտաքսումի դատապատուածներէն զատ որ եւ է միաբան եթէ առողջական և այլ բանաւոր պատճառներով Միաբանութենէ հրաժարիլ ուզէ, պարտաւոր է պատճառաբանել հրաժարագիր ներկայացնել Պատրիարքին որ կը յղէ զայն Միաբանական Ընդհ. Ժողովին:

ՅՕԴ. 17 Միաբանութեան ամէն մէկ անդամ Վարչութեան մէջ իրեն յանձնուած պաշտօնէն կամ պարտականութենէն դուրս չի կրնար տարրեր պաշտօն և պարտականութիւն ստանձնել, հակառակ չարժող միաբանը, իբր անկարգապահ, ներքին կանոնադրով կանխատեսուած պատժին կ'ենթարկուի և եթէ հարկ է կը հրաժարեցուցուի:

Եթէ Ազգ. Կեդր. Վարչութիւնը հարկ տեսնէ, Երուսաղէմի Պատրիարքին հաւանութիւնով, կրնայ որ և է միաբանի վանքէն դուրս Ազգ. պաշտօն մը յանձնել: Այդ պաշտօնին լրանալէն յետոյ միաբանը պարտաւոր է վանք վերադառնալ:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 18 Միաբանական Ընդհ. Ժողովը կը կազմուի միաբանութեան բոլոր անդամներէն:

ՅՕԴ. 19 Միաբանական Ընդհ. Ժողովը ունի իր գիւնը բաղկացած Ա. եւ Բ. Ատենապետներէ եւ Ա. եւ Բ. Ատենադպիրներէ:

Դիւանի անդամներուն պաշտօնը մէկ տարի կը տեւէ և յաջորդ տարիին համար վերընարելի չեն:

ՅՕԴ. 20. Միաբանութեան Ընդհանուր Ժողովին նիստերն ու որոշումներն վաւերական ըլլալու համար միաբաններու ընդհանուր թիւին առնուազն կէսէն մէկ աւելիին ինչպէս նաև Ազգ. Ընդհ. Ժողովի ներկայացուցիչին ներկայութիւնն անհրաժեշտ է:

ՅՕԴ. 21 Միաբանական Ընդհանուր Ժողովի իւրաքանչիւր անդամ իւր պաշտօնավարութեան, ինչպէս նաև Տնօրէն Խորհուրդի անդամները, Տնօրէն Խորհուրդի վերաբերեալ խնդիրներու մասին քուէ տալու իւրաւունք չունին:

ՅՕԴ. 22. Ամբաստանութեանց եւ ընտրութեանց վերաբերեալ բոլոր քուէարկութիւնները գաղտնի կը կատարուին:

ՅՕԴ. 23. Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ ներկայացուցիչը՝ իր հսկողի և հակակշռողի հանգամանքով, խորհրդակցական մասնակցութիւն ունի Ժողովին մէջ, բայց քուէ չունի:

ՅՕԴ. 24. Միաբանական Ընդհ. Ժողովը կրնարէ Տնօրէն Խորհուրդը որ եթէ անդամներէ կը բաղկանայ, Տնօրէն Խորհուրդի անդամները չեն կրնար ընդհանուր Ժողովի գիւնին անդամակցիլ:

ՅՕԴ. 25. Միաբանական Ընդհանուր Ժողովը վանքի ընդհանուր շահերուն վերաբերեալ առաջարկներ կրնայ ներկայացնել Տնտեսական Մարմնին կամ Պոլսոյ խնամակալութեան:

ՅՕԴ. 26. Տնտեսական և խառն մարմինները ուղղակի Ազգ. Կեդր. Վարչութեան ենթակայ և անոր պատասխանատու կամ համարատու են: Սակայն, միաբանական ընդհանուր Ժողովն ալ, վանքին շահերը վտանգուած տեսած պարագային, իրաւունք ունի տնտեսական եւ խառն մարմիններէն բացառութիւն պահանջելու, և ի հարկին պատճառաբանեալ տեղեկագրով բոլոր ներկայացնելու Ազգային Կեդրոնական Վարչութեան:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅՕԴ. 27. Տնօրէն Խորհուրդը կը կազմուի եթէ Տեսուչներէ, որոնցմէ հետեւեալ 6ը՝

1. Լուսարարապետ
2. Թարգման
3. Ուսումնապետ
4. Թանգարանապետ
5. Տպարանապետ
6. Դարպասնկալ

Միաբանական Ընդհ. Ժողովին կողմէ կ'ընտրուին գաղտնի քուէով և իրենց յատուկ պաշտօններով, իսկ եթէ անոնք որ է Պատր. փոխանորդը կ'անուանուի Ս. Պատրիարքին կողմէ:

ՅՕԴ. 28. Տնօրէն Խորհուրդի պաշտօնավարութեան չրջանը երեք տարի է և անդամները վերընարելի են:

ՅՕԴ. 29. Տնօրէն Խորհուրդը կ'ընտրէ վանքին կանոնադրով որոշուած բոլոր կրօնական պաշտօնէութիւնը: Տնօրէն Խորհուրդի իւրաքանչիւր անդամ պատասխանատու է իր ճիւղին համար կարգուած պաշտօնեաներուն գործածութեանց: Տնօրէն Խորհուրդը իր իրաւասութեան յատուկ խնդիրները ուղղակի կը կարգադրէ, և Միաբանական Ընդհ. Ժողովի անօրինութեան կարօտ խնդիրները կը տեղեկագրէ նոյն ժողովին:

ՅՕԴ. 30. Տնօրէն Խորհուրդը իրաւունք չունի իր կրօնավարչական իրաւասութեան պատկանող խնդիրներէն դուրս՝ անտեսական, ելմական և ուսումնական խնդիրներու միջամտելով կարգադրութիւններ ընկելու, ինքնուրոյն որոշումներ տալու:

ՅՕԴ. 31. Տնօրէն Խորհուրդի անդամներէն իւրաքանչիւրը իր տեսչութեան յատուկ խնդիրներու համար անհատապէս իսկ տնօրէն Խորհուրդի գործունէութեան համար հաշաքարար պատասխանատու են Ս. Պատրիարքին և Միաբանական Ընդհ. Ժողովին, որոնք իրենց կարգին պատասխանատու են Ազգ. Կեդր. Իշխանութեան:

Մ Ա Ս Բ.

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն

ՅՕԴ. 32. Ս. Յակոբեանց վանքի ու սնոր ենթակայ Ս. տեղեաց և հիմնարկութեանց յատուկ Տնտեսական Մարմինը կը կազմուի.

1. Կալուածապէտ,
2. Մատակարար,
3. Համարակալ,

Որոնք կ'ընտրուին Ազգ. Վարչութիւնէն կարգուած Երուսաղէմի յատուկ Խնամակալութեան կողմէ և կը հաստատուին Կեդր. Վարչութեան Խառն Ժողովէն: (*)

ՅՕԴ. 33. — Տնտեսական Մարմնի անդամները իրենց ճիւղին յատուկ ձեռնհասութեամբ օգտուած հմուտ անձերէ կը բաղկանան՝ որոնք վանքի ելմացոյցին մէջ նշանակեալ թոշակներով վճարուած պաշտօնեաներ են: Ստաց իւրաքանչիւրը իւր ճիւղին վերաբերեալ խնդրոց համար անհատապէս և մատակարարական-եկամական-հաշուա-

ԾԱՆՈԹ. Ազգ. Սահմանադրութեան 44րդ յօդուածի տրամադրութեամբ կազմուած վանքից Խորհուրդի իրաւասութեան սահմանը բոլոր վանքերու վրայ տարածուելով եւ Երուսաղէմի վանքի եկմական տնտեսական գործառնութիւնները՝ իրենց կարեւորութեան պատճառաւ առանձնապէս զբաղման արժանի ըլլալով՝ Պատրիարքարանի կազմ. կանոնորդի համաձայն Երուսաղէմաց հակաշրջի անունով յատուկ մարմին մը պիտի կազմուի ճինգ անդամներէ բաղկացած:

կան ամբողջ տնտեսական խնդրոց և գործառնութեանց համար հաւաքարար պատասխանատու են Խնամակալութեան:

ՅՕԴ. 34. Տնտեսական Մարմինը իր տրամադրութեան տակ անհրաժեշտ պաշտօնեաներ ունենալէ զատ, ունի նաեւ գանձապահ մը՝ որուն անուանումը կ'ենթարկուի Խնամակալութեան վաւերացումին և որ Խնամակալութեան կողմէ որոշուած զրամական երաշխաւորութիւնը պարտաւոր է տալու:

ՅՕԴ. 35. Գանձապահը պարտաւոր է իր գանձումները կատարել կալուածապետի ու համարակալի կողմէ ստորագրուած հրամանագրով և յատուկ ստացագրերով: Գանձապահը չի կրնար ունէ գումար վճարել՝ առանց մատակարարի և հաշուակալի կողմէ ստորագրուած հրամանագրի:

ՅՕԴ. 36. Տնտեսական Մարմնի պաշտօնն է Երուսաղէմի մէջ կամ այլուր Ս. Յակոբեանց վանքի ունեցած կալուածոց վարչութիւնը, եկամուտներու և նուիրատուութեանց գանձումն ու տնտեսութիւնը, սնունդի ու հանդերձեղէնի, վառելիքի ու լուսավառութեան եւ այլ ծախքերու մատակարարութիւնն, թոշակներու վճարումը վանական ամբողջ եկեւմուտքի յանձնաձումը և հաշուակալութիւնը, վերջապէս վանքի բոլոր գոյքերուն և հարստութեան պահպանութիւնը ու զարգացումը: Տնտեսական մարմինը կը մասնակցի նաեւ վանուց Ուսումնական մասի վարչութեան՝ խառն մարմնի մաս կազմելով:

ՅՕԴ. 37. Տնտեսական մարմինը իր պաշտօնը կը կատարէ սոյն կանոնադրով և ներքին կանոններով սահմանուած կարգերու համաձայն և ամէն տարի պատրաստուած և վաւերացուած եկմացոյցին ճշգրիտ հետեւողութեամբ և գործադրութեամբ:

ՅՕԴ. 38. Տնտեսական մարմինը չի կրնար ելմացոյցին սահմաններէն դուրս ծախք, նորոգութիւն և կալուածական գնում կատարել կամ որ և է մէկու մը փոխատուութիւն ընկել: Առանց կեդրոնական վարչութեան խառն ժողովի բացառիկ արտօնութեան որ հիմնուած պիտի ըլլայ Խնամակալութեան առաջարկին վրայ՝ բացարձակապէս արգելուած է կալուած կամ ունէ սեփականութիւն ծախել եւ փոխառութիւն կնքել:

ՅՕԴ. 39. Տնտեսական մարմնի նիստերը եւս օրինաւոր չեն կրնար համարուիլ՝ եթէ Ազգ. Կեդր. Երեսփոխանական Ժողովի ներկայացուցիչը ներկայ չի գտնուի, որուն հաւանութիւնը անհրաժեշտ է տրուած որոշումներու գործադրութեան համար:

ՅՕԴ. 40. Վանքի կալուածներէն մաս մը եթէ առանց վարձքի կարօտ ազգայիններու բնակութեան յատկացնել պէտք ըլլայ, հարկ է որ նախապէս յատուկ վաւերագրերով հաստատուի թէ ստուգիւ նպատակաւորութիւնը ազգայինը անօգնական, կարօտ, որը կամ որբ-ւայրի, ծեր ու աշխատութեան անկարող, վերջապէս նիւթական միջոցներէ զուրկ է: Այս պարագային ալ, վճարող վարձակալներու նման, հարկէ պաշտօնական օրինաւոր վարձակալութեան պայմանագրութիւններ կնքուին: Բացարձակապէս արգելուած է առանց պայմա-

նագրութիւն կնքելու որ և է կալուած, ճրի ըլլայ թէ փոխարինութիւնով վարձակալութեան տալ:

Տնտեսական մարմինը եթէ հարկ տեսնէ կարօտեալներու անունդի համար օժանդակութիւն ընել օժանդակութիւնը ամսական դրամական վճարումի պիտի վերածուի այս կարգի նպաստներու համար ելմտացոյցով կանխատեսնուած դումարի սահմանին մէջ:

Մ Ա Ս Գ.

Խ Ա Ռ Ն Մ Ա Ր Մ Ի Ն

ՅՕԴ. 41. Ս Յակորեանց վանուց հաստատութիւններէն դպրեւանքի, Թանգարանի, Տպարանի վարչութիւնը և վերոյիշեալ նըպաստից հոգածութիւնը յանձնուած է խառն մարմնի մը որ կազմուած է Տնտեսական մարմնի երեք անդամներէն և Տնօրէն խորհրդի երեք անդամներէն: Տնօրէն խորհուրդէն խառն մարմինին անդամակցողներն են Սւտումնապետը, Թանգարանապետը և Տպարանապետը, որով խառն մարմինը կը բաղկանայ վեց անդամներէ:

ՅՕԴ. 42. Խառն մարմինը կը վարէ վերոյիշեալ հաստատութեանց գլխաւոր տնտեսական մասը, իւրաքանչիւրին մասնագիտական մասը յանձնուած ըլլալով պատկանեալ Տեսչին: Փոխադարձ յարաբերութեանց սահմաններն ու խառն մարմնի հաւաքական խորհրդակցութեան ու որոշման կարօտ խնդիրները կը ճշտուին ներքին կանոնադրով:

ՅՕԴ. 43. Խառն մարմնի նիստերուն օրինաւորութեանը համար ևս անհրաժեշտ է Ազգ. Կեդր. Երեսփոխանական Ժողովի Ներկայացուցչին ներկայութիւնը և ատենագրութեանց մէջ ստորագրութիւնը: Տես յօդ. 23 և 39:

Մ Ա Ս Գ.

ԱԶԳ. ԿԵԴՐ. ԵՐԵՍՓ. ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՁԸ

ՅՕԴ. 44. Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովուրդ Ս. Երեսփոխ. Յակորեանց վանուց վարչութեան քոյր մասերուն վրայ իր հսկողութեան իրաւունքը տեղւոյն վրայ անմիջական կերպով կը գործադրէ իր կողմէ ընտրուած մնայուն ներկայացուցչի մը միջոցաւ:

ՅՕԴ. 45. Ներկայացուցիչը գործադիր դեր չունի, իր իրաւասութեան սահմանն է աչալուրջ հսկողի, անաչառ հակակշռողի պատասխանատու պարտականութիւնը, ուստի վանքի միաբանական ժողովներու, խորհուրդներու, մարմիններու հաւաքական, ինչպէս իւրաքանչիւր տեսուչի անհատական գործառնութեանց մասին ներկայացուցիչը իրաւունք ունի իր տեսակետի տարբերութիւններն ու դիտողութիւններն հաղորդելու: Եւ եթէ, այս կարգի ըստ որոշումներու եւ գործառնութեանց մէջ օրինական զանցառութիւններ ծանրակշիռ սրխալներ և զեղծումներ տեսնուին, ներկայացուցիչը իրաւունք ունի իր անձնական պատասխանատուութեան տակ արգելիչ միջոցներ ձեռք առնելու խնդրոյն կարեւորութեան համապատասխան եղանակով:

ՅՕԴ. 46. Ներկայացուցիչը պարտաւոր է վանքի ընդհանուր կացութեան և իւր գործունէութեան վերաբերեալ ամփոփ ու լիակատար ամսական տեղեկագիրներ ներկայացնել Ազգային Կեդրոնական վարչութեան: Տեղեկագիրները բաժնուած ըլլալու են վանքի վարչական բաժանումին համապատասխան երեք մասերու:

ՅՕԴ. 47. Ներկայացուցիչը իր անձնական պատասխանատուութեամբ ձեռք առած արգելիչ միջոցները պարտաւոր է անմիջապէս ներկայացնել Ազգ. Կեդր. իշխանութեան և ենթարկել զանոնք ազգ. Կեդր. վարչութեան հաւանութեանը:

ՅՕԴ. 48. Ներկայացուցիչը անմիջական պատասխանատուութիւն ունի զինքը ընտրող Երեսփոխանական ընդհանուր ժողովին առջև:

ՅՕԴ. 49. Ներկայացուցիչի ընտրութեան պայմաններն են, ազգային և պետական օրինաց ծանօթութիւն, անբասիր վարք ու անձնական հեղինակութիւն:

ՅՕԴ. 50. Առանց օրինաւոր պատճառի, կամ Ազգ. Կեդրոնական իշխանութենէ դատապարտութեան և կամ կամովին հրաժարման ներկայացուցիչը չի հրաժարեցուցուիր և կ'ստանայ վանքի ելմտացոյցով իր պաշտօնին յատկացուած թոշակը:

Մ Ա Ս Ե.

Ե Լ Մ Տ Ա Յ Ո Յ Ց

ՅՕԴ. 51. Երեսփոխ. Ս. Յակորեանց վանուց և անոր ենթակայ Սրբատեղիներու և մասնաճիւղերու տարեկան ելմտացոյցը կը բաղկանայ երկու մասերէ, սովորական և արտակարգ:

Սովորական մուտքի մասերն են՝

Ա. — Կալուածական վարձքերը:

Բ. — Պահեստի գումարներու սովորները

Գ. — Ուշտաւորներու նուէրները Դարպաս են .

Դ. — Տպարանի հասոյթ

Ե. — Դպրանոցի թոշակաւոր աշակերտներու ամսականները ,

Զ. — Իւզագին և Մումագին

Արտակարգ մուտքի մասերն են՝

Ա. — Փոխառնութիւն

Բ. — Արտակարգ նուէրներ

Գ. — Կտակներ

Դ. — Վախճանած միաբաններու ժառանգութիւն

Ե. — Սեփականութեան վաճառումներէ գոյացած գուժարներ :

Սովորական ելքի մասերն են

Ա. — Պատրիարքի և միաբաններու թօշակներ

Բ. — Պատրիարքի , Միաբաններու և պաշտօնեաներէն միայն վանքին մէջ բնակողներու վառելիքի և լուսավառութեան ծախքեր

Գ. — Տնտեսական մարմնի և անոր ստորադասեալ պաշտօնեաներու թոշակներ :

Դ. — Երեսփ. Ընդհ. Ժողովի ներկայացուցիչի թոշակ :

Ե. — Կալուածական տուրք , անշարժ ու շարժական սեփականութեանց սպահովագրութիւն :

Զ. — Կալուածական նորոգութիւն :

Է. — Մումատուն :

Ը. — Դպրանոցի ուսումն. պիտոյք և պաշտօնէութիւն :

Թ. — Դպրանոցի աշակերտութեան սնունդ , հագուստ և այլ ծախքեր :

Փ. — Տպարանական ծախքեր :

ՓԱ. — Բժիշկի և դեղի ծախքեր :

ՓԲ. — Պարտքերու տոկոսներ և գլխավճարներ :

ՓԳ. — Կարօտ և անօգնական որբերու , որբեւայրիներու , ակարներու բնակարանի ևն .ի համար ծախքեր :

ՓԴ. — Դիւանական ծախքեր , թուղթ , թանաք , տոմար , բօստ , հեռագիր ևն . :

ՓԵ. — Արտաքին յարաբերութեան ծախքեր :

ՓԶ. — Ճանապարհորդութեան ծախքեր :

ՓԷ. — Չնախատեսուած և բացառիկ ծախքեր :

ՓԸ. — Թանգարան և մատենադարան :

Արտակարգ ելքի մասերն են

Ա. — Կալուածներու գնում

Բ. — Կալուածներու չինտ թիւն

Գ. — Փոխառութեանց ամբողջական գլխավճարներ :

ՅՕԴ. 52 Իւրաքանչիւր պետ կամ տեսուչ , ամէն տարւոյ երկրորդ վեցամսեայի սկիզբէն , իւր ճիւղին տարեկան ծախքերուն կամ ելեւմուտքին նախահաշիւը պատրաստելով նոյեմբերին սկիզբը կը

ներկայացնէ իւր պատկանած մարմնին . այսինքն , կամ Տնօրէն Խորհուրդին , կամ տնտեսական մարմնին և կամ խառն մարմնին :

ՅՕԴ. 53. Տնօրէն Խորհուրդը , քննելով իրեն ներկայացուած նախահաշիւները իր դիտողութիւններով միասին կը ներկայացնէ միաբանական Ընդհանուր Ժողովին ուր կը կազմուի կրօնական մասին ընդհանուր նախահաշիւը և կը յանձնուի խառն մարմնին : Տնտես. մարմինը ևս նոյն կերպով իր ելմտական նախահաշիւը կազմելով կը յանձնէ խառն մարմնին : Խառն մարմնի կողմէ կը կազմուի ընդհանուր ելմտական նախահաշիւը և կը դրկուի Խնամակալութեան , որ իր տեղեկագրով միասին կը յանձնէ զայն Ազգ. Կեդր. Վարչութեան հնթարկելու համար Ազգ. Ընդհ. Ժողովի վաւերացմանը :


ՅՕԴ. 54. Նախորդ 53րդ յօդուածով սահմանուած բոլոր գործողութիւնները մինչեւ դեկտեմբեր 15 վերջացնել և ընդհանուր ժողովի վաւերացումը ստանալ պարտաւորիչ է : Ելմտացոյցը յունվարի սկիզբէն գործադրութեան կը դրուի :

ՅՕԴ. 55. Ելմտացոյցին պատրաստութեան մասին նախորդ 53 և 54րդ յօդուածներով սահմանուած գործողութեանց յապաղման պատճառ եղող տեսուչ կամ մարմին պատասխանատու է նիւթապէս և բարոյապէս :

ՅՕԴ. 56. Եթէ որ և է բացառիկ պատճառով մինչեւ դեկտեմբեր 15 ելմտացոյցը Ընդհ. Ժողովէն վաւերացուած չըլլայ , երեսփոխանական գործողութիւնները կը կատարուին վերջացող տարւոյն վաւերացուած ելմտացոյցին համաձայն :

(Ընդունուած եւ վաւերացուած Ազգ. Խրեմփոխանական Ժողովի 7 դեկտեմբերի 1913ի ԻԱ նիստին մէջ) :





4090



